

Հանդիպում Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մոտ

17.02.2016



Այսօր ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանն ընդունեց Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ („Առնապ,“) հիմնադրամի տնօրեն Մովսես Պողոսյանին: Հանդիպմանը մասնակցում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանը և ՀՀ ՏԿԱԻՆ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ փոխգնդապետ Տիգրան Պետրոսյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեց սահմանամերձ Խաչիկ համայնքում ժամանակակից ազդարարման համակարգի տեղադրման ծրագիրը, որը մեկնարկել է փետրավար ամսվա սկզբին: Համակարգը կմիացվի մարզային և հանրապետական կենտրոնացված համակարգին: Ծրագրով նախատեսվում է նաև ազդարարման համակարգի սպասարկման անձնակազմի ուսուցում: Հիմնադրամի տնօրեն Մ. Պողոսյանի խոսքով ծրագիրը ավարտին կհասցվի երկու ամսվա ընթացքում: